



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 22 ՅՈՒՆԻՍԵՐ, 2018

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ ԳՈՐԾԵԼ առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻ. ԵՆ ՈՂՈՐՄԵԱ ՔՈ արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 23

### ՏԵՐՆ Է ՀՈՎԻԻՍ

*Տէրը իմ հովիւս է.*

*ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:*

*Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ,*

*հանդարտ ջուրերու ղոյլ ինձի կ'առաջնորդէ:*

*Հոգիս կը նորոգէ:*

*Իր անունը համար արդարութեան նամբաներու մէջ*

*կ'առաջնորդէ ինձի:*

*Թէեւ մահուան շուֆի ձորին մէջ ալ պտըտիմ,*

*չարէն պիտի չվախնամ, որովհետեւ դուն ինձի հետ ես,*

*քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք զիս կը մխիթարեն:*

*Սեղան կը պատրաստես իմ առջեւս իմ թշնամիներուս դիմաց.*

*իմ գլուխս իւղով կ'օծես, իմ բաժակս խիստ լեցուն է:*

*Յիրաւի բարեբարութիւնն ու ողորմութիւնը ինձի հետ պիտի ըլլան:*

*Կեանքիս բոլոր օրերուն մէջ,*

*ու շատ օրեր Տիրոջ տունը պիտի բնակիմ:*

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**

**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

# ՕՐՈՒԱՆ ՆԻԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՎԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

1:3-11

## ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ԿՈՉՈՒՄԸ (1:3-11)

«Քրիստոս իր աստուածային զորութեամբ մեզի պարզեց ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի մը համար» (3 հմր): Այո, Քրիստոս Իր աստուածային զորութեամբ մեզի փրկեց ամեն ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի համար անով սկսելու, պահելու եւ հասնելու աւարտին: Այս պարզեցումը, որոնք փրկեց են, անոնցմով մենք կրնանք փորձառութիւնը ունենալ, որ փրկեց են: Անոնք փրկեց են հաւաքացեալին եւ ոչ թէ անհաւաքին: Ուրեմն, հաւաքացեալ մարդը իր հաւաքի կեանքին մէջ, Քրիստոսի նկատմամբ ունեցած գիտութեամբ եւ ճանաչումով, ինչպէս նաեւ թանկագին հաւաքով այս անհրաժեշտ պարզելը փրամադրելի է: Ի՞նչ է որ փրկեց է: Տրուածը հեքեալն է: Այնպէս չենք, ինչ որ էինք նախապէս, մեր մտածելակերպով, մեր կեանքին նկատմամբ ունեցած վարահութեամբ, մեր դիրքով, մեր ունեցածով: Այլեւս փարբեր է մեր մտածելակերպը, մեր ունեցած վարահութիւնը Աստուծոյ վրայ առաւել եւս կապուած մեր ապագային, մեր ունեցումը: Ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի համար, եւ ոչ թէ ինչ որ ես կ'ուզեմ: Այլ խօսքով, եթէ Յիսուս Քրիստոսը ունիմ, ուրեմն կը նշանակէ ամէն ինչ ունիմ կեանքի համար: Այդպէ՛ս է: Ինչպէս պիտի ըսէ Սաղմոսերգուն. «Տերը իմ հովիւս ես, ես բանի մը կարօտ պիտի չլլամ» (Սաղմ 23:1): Որովհետեւ. «Անկա թանկագին ու մեծամեծ խոստումներ փրկեց մեզի» (4 հմր): Ի՞նչ խոստումներ փրկեց. «Ինծի եկէք դուք բոլորդ յոգնած ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզի հանգիստ պիտի տամ» (Մտք 11:28): «Ես ձեզի հետ պիտի ըլլամ մինչեւ աշխարհի վերջը» (Մտք 28:20): «Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիս: Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ՝ ներս պիտի մտնեմ եւ անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ» (Յայտ 3:20): «Ես եկայ որպէսզի կեանք ունենայք եւ առաւել կեանք» (Յով 10:10): Սուրբ Հոգին փրկու խոստումը «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զորութեամբ պիտի լեցուք եւ իմ վկաներս պիտի ըլլաք» (Գործք 1:8): Փորձութեան դիմաց յաղթանակի խոստումը «որովհետեւ Ինք չարաբարութեամբ փորձուցաւ, կրնայ օգնել փորձութեան մէջ եղողներուն» (Եբր 2:18): Իր վերադարձի խոստումը, «Թող չխռովին ձեր սիրտերը: Երբ երթամ եւ ձեզի համար քննեմ, դարձեալ պիտի գամ եւ ձեզ քովս առնեմ, որպէսզի ըլլաք հոն՝ ուր որ եր կը գտնուիմ» (Յով 14:1-6): Տակաւին չհաշուած այն միւս խոստումները, որ ամբողջ Աստուածաշունչը լեցուն է: Իսկ այս բոլորն համար Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Արդարեւ, Քրիստոս Աստուծոյ բոլոր խոստումներուն «Այո»ն է՞ Ահա թէ ինչու, մենք Քրիստոսը ընդունելով՝ Աստուծոյ Այո-ին «Ամէն» կ'ըսենք, իր փառքին համար» (Բ Կորնթ 1:20): Ինչո՞ւ այս բոլորը խոստումները, որպէսզի «անոնցմով հաղորդակից ըլլանք աստուածային բնութեան, ձերբազարուելով աշխարհի մէջ փրկուց կորստաբեր ցանկութիւններէն» (4 հմր): Սուրբ Հոգին մեր մէջ ներգործելով հաղորդակից կը դառնանք աստուածային բնութեան, առաւել եւս կը ձերբազարուինք չար ցանկութիւններէն, որոնք մեզ դէպի կորուստ կը փնտրեն: Ահա թէ ինչու Պետրոս Առաքեալ կոչ կ'ուղղէ քրիստոնէայ հաւաքացեալներուն ինչպէս ապրելու ընկերութեան մը մէջ, ուր մնայուն պայքարը կայ ձերբազարուելու այս չար ցանկութիւններէն: Ի՞նչ ընել, ամուր կարգած մնալ Քրիստոսի փրկած խոստումներուն, որ պարզեց իր աստուածային զորութեամբ ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի համար:

5-9 հմր կու գան ցոյց փրկու յառաջխաղացքը, յառաջընթացը փրկուած խոստումին: «Ապրոք համար ալ», այսինքն՝ վերը ըսուածին համար ալ, «ամէն ջանք ըրէք՝ որ ձեր հաւաքով առաքինութիւն ձեռք բերէք, առաքինութեամբ՝ գիտութիւն, գիտութեամբ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեամբ՝ համբերութիւն, համբերութեամբ՝ աստուածապաշտութիւն, աստուածապաշտութեամբ՝ եղբայրսիրութիւն, եղբայրսիրութեամբ՝ սէր» (5-7 հմր): Այս բոլորը կը կոչուին՝ առաքինութեան աստիճան, որուն կոչում է իրաքանչիւր քրիստոնէայ հաւաքացեալ այդ ուղղութեամբ ջանք թափելու: Անհրաժեշտ ու անխուսափելի: Այս առաքինութեան աստիճանի փուլերը նոյնանման են Պօղոս Առաքեալի Գաղատացիներուն գրած Սուրբ Հոգիի պարտիւններուն: Առաջին իսկ արտայայտութիւնը հաւաքը: Ձեր հաւաքին աւելցուցէք: Հաւաքաբը ինք հիմնաքարն է ու պէտք է ըլլայ այս ամբողջին: Ամբողջական վարահութիւն Յիսուս Քրիստոսին: Ամբողջական համոզումը Քրիստոսի ըսած խօսքերուն ու խոստումներուն: Մենք գմեզ յանձնելու Իր փրկած խոստումներուն, որպէսզի կարող ըլլանք բարձրանալու առաքինութեան աստիճանը դէպի վեր: Գիտութիւն ձեռք բերել: Այսպէզ գիտութիւն կը նշանակէ գործնական, փորձառական յարաբերութիւն Յիսուս Քրիստոսի հետ, Յիսուս Քրիստոսը ճանչնալու գիտութիւնը:

Ահա Քրիստոս ճանաչումի գիտութիւնը մեզ կ'առաջնորդէ ժուժկալութեան, իսկ ժուժկալութիւնը՝ համբերութեան, համբերութիւն՝ աստուածաշարժութեան, եղբարսիրութեան եւ ի վերջոյ՝ սիրոյ: Պետրոս Առաքեալ կը վստահեցնէ ըսելով. «**Եթէ այս առաքինութիւնները ունենաք, եւ ունենաք միշտ աւելիով, վստահ եղէք՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գիտութեամբը կը լեցուիք եւ անգործ ու անպտուղ չէք մնար**» (8 հմր): Կը նշանակէ, անպայմանօրէն այս բոլորի պտուղները կը սկսինք փեսնելու մեր կեանքին մէջ: Այս բոլորը պայմանաւորուած են «եթէ»ով: Իսկ ով որ այս առաքինութիւնները չունի, Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «**միտքով կոյր ու կարճատես է, որովհետեւ մոռցած է իր անցեալի մեղքերէն սրբուած ըլլալը**» (9 հմր), ինչ որ Աստուած կատարեց մեղքեր ներելու համար:

Ապա կը շարունակէ ըսելով. «**Եղբայրներ, ջանացէք աւելիով կառչիլ այն կոչումին, որուն հրաւիրեց ձեզ Աստուած: Եթէ այդպէս վարուիք՝ բնաւ մեղքի մէջ չէք իյնար, եւ այդպիսով ձեզի լայնօրէն իրաւասութիւն կը փրոյնի մտնելու մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի յաւիտենական արքայութեան**» (10-11 հմր): Ինչպէս Պօղոս Առաքեալ, Պետրոս Առաքեալ ինք եւս հաւաքացեալի կեանքը կը նմանցնէ մարգիկի մը որ ամէն ջանք ու ճիգ կ'ընէ վազելու այնպէս մը, մկանները պրկելու այնպէս մը, որպէսզի մրցանակը ձեռք ձգէ: Ահա այդ իսկ պարճառով, կը նշանակէ, որ հաւաքքի կեանքը կայուն, քարացած բան մը չէ, այլ մնայուն զարգացող, յառաջընթացք ունեցող վիճակ մը: Ուստի Աստուած ինչպէս մեզ կը պահէ մեղքի մէջ չիյնալէն: Երբ մեզ կ'առաջնորդէ դէպի այն ճշմարտութիւնը, որուն մասին կը գրէ Պետրոս Առաքեալ ըսելով. «**ամէն ջանք ըրէք, հաւաքքով առաքինութիւն ձեռք ձգելու: Զանացէք աւելիով կառչիլ այն կոչումին**»: Այլապէս միտքով կոյր եւ կառճատես ես: Այլապէս ինչ բան է որ մեզ կ'արգիլէ գալու Աւերարանին եթէ ոչ մեր խաւարամտութիւնը, հպարտութիւնը, անհաւաքութիւնը: Բայց եթէ ականջ փանք Աստուծոյ խօսքին, մեր սրտերը բանանք Անոր փուած ողորմութեան ու հաշտութեան, ահա այն արեւն կրնանք քալել այն ճամբէն որ Քրիստոս գծե՛ծ: Ուրեմն, որպէսզի չիյնանք, մնայուն պէտք է լսենք Աւերարանի պարգամները, որ մեզ կը յիշեցնեն այս բոլորի մասին: Ինչպէս պիտի ըսէ Պետրոս Առաքեալ յաջորդ համարով. «**Ահա թէ ինչու, միշտ ձեզի պիտի յիշեցնեն այս բաները, մեկնելէ յետոյ ալ միշտ այս բաները յիշէք**» (12-15 հմր):

